ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

22 հուլիսի 2014թ. թիվ 30-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի "Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին" թիվ 626-Ն որոշմամբ սահմանված կարգի 10-րդ կետով

կարգադրում եմ,

1. Ստեղծել ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով հետևյալ կազմով,

Հ.Ղուլիջանյան – հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետի օգնական

Ա.Սարգսյան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Գ.Բաղալյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Մ.Մելքումյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Ռ.Օթարյան - քաղաքաշինության պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/

համապատասխան համայնքի ղեկավարներ

տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ

հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ

կապալառու կազմակերպությունների ներկայացուցիչներ

այլ շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչներ

2. Հանձնաժողովի նախագահ Հ.Ղուլիջանյանին՝

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի "Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին" թիվ 626-Ն որոշման կարգին համապատասխան:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ԱԲՈՎՅԱՆ

....հուլիսի 2014թ.
Բ.Իշխան